

### 17-րդ ԴԱՐԻ ՄԻ ԱՆՅԱՅՏ ՁԵՌԱԳԻՐ

Հայ մանրանկարչական եւ գրչագրական արուեստի արժէքաւոր մնացորդներից մէկն է Իրանի մայրաքաղաքում՝ Թէհրանի Հայոց եկեղեցում գտնուած ձեռագիր Աւետարանը (1), որի առաջին էջի վրայ կապոյտ թանաքով գրուած է. «Ձեռագիրք Թեհրանի թիւ 4 Աւետարան Ռ 2 Ձ = 1627 ք.»:

Դա տախտակէ կազմով, վրան մուգ կարմիր թաւշով պատած, արծաթէ երկու մեծ՝ եւ ութ փոքր խաչերով ու կարմիր, կանաչ, կապոյտ քարերով դարդարուած մի գրչազիր է, որի առաջին երեսի մեծ խաչի վրայ, զարդարուած չորս կարմիր քարերով, Մեսոպոտանի երկաթազիր տաւրով փորագրուած է. «Այլք Խաչ յիշատակ է Փարի Խազիմ, կազակից Տէր ըՄտեփաննայիմ, Խայրե Մարտիրոսեմ, մայրե Մարիամնի, թիվն Ռ 2 Ի է (1127×551= 1678)»: Հանգամանքը մշակութարական է. մեծութիւնն է 28×17 սմ., բաղկացած է 265 թերթից. գրուած է բամբակի թղթի վրայ, գեղեցիկ բոլորագրով, երկսիւն, Հայոց Ռ 2 Ձ (1076×551=1627) թուականին: Վատակաւոր գրիչն ու նկարիչն է Աստուածատար Դպիրը, մէկը նկարելու եւ ստեղծագործելու անժբեհեկի ձիրքով օժտուած այն տաղանդաւոր արուեստագէտներից, որոնք 17րդ դարի առաջին շտորոքում իրենց ձեռքում բարձր են պահել մանրանկարչական արուեստի գրօջը: Այդ հանգամանքն են ընդգծում ձեռագրի 82րդ էջի յիշատակարանի հետեւեալ տողերը.

— «Ձմեղազարդ գծող սարկաւազ Աստուածատուրս յիշեցէ Կի Քրիստոս եւ մեղաց թողու թիւն Հայցեցէ եւ գուգ յիշէ Կի Քրիստոսէ, ա-

(1) Գրչագիրն աւսումնասիրութեան համար արամադրեց մեզ Թեհրանի թեմի ժամանակաւոր Ասաբերդի՝ Գեոր. Տ. Խաւքեմ եպ. Երամանը: Վերջերս նոյն ձեռագիրն ազարկակեց իջմամբին եւ փրկուեց կորստից: Ժամանակն է, որ մեր բալար ձեռագիրները փոխադրուեն Երեւանի Պետական ձեռագրատունը, այր ա՛յնքան խնամքով եմ պահում եւ աւսումնասիրում: Ար. Եր.

մէն: Գրեցաւ թվ. Ռ 2 Ձ: Յիշեցէ զմահտեպի Հայրն իմ՝ Կարապետն Կի Քրիստոս»:

Այս տողերն ուշագրաւ են կրկնակի տեսակէտից. 1. պարզում են ձեռագրի գրչի եւ նկարչի գիմագիծը: Դա սարկաւազ Աստուածատուրն է, որդին մահտեպի Կարապետի: 2. Հաստատում են գրչութեան ժամանակը, որ Աւետարանը գրուել է եւ նկարագրադուել 1627 թուին, երեսուցներ, առանց որոնց դժուար կը լինէր գնահատել ձեռագրի արժէքը մեր արուեստի եւ մշակութի պատմութեան համար:

Նոյնքան ուշագրաւ է 261րդ էջի յիշատակարանը, որ պարզում է ո՛չ միայն գրողի անունն ու ժամանակը, այլ եւ տեղը.

— «... որ յանդ հանել Հիւծեղոյս յանցանօք անպիտան եւ մեղաւոր գրչին Աստուածատուր դպիրս, որոց աստուածամուխ բանից գրել արժանի արար գիմս անարժանութիւն, ջանդի սկզբեալ կատարեցի աւետանուն երանութիւնս, Կի թղվականիս Ռ 2 Ձ, Կի քաղաքն Երեբրայ, որ թարգմանեալ կոչի Հայապ»:

Այս արժէքաւոր տողերն էլ վկայում են, որ Հայապում եւս Հայ մանրանկարչական արուեստը զարգացել եւ արել է որոշ նուաճումներ: Այդ միջավայրում կազմակերպուել է նաեւ 17րդ դարի տաղանդաւոր նկարիչ՝ Նոր-Ջուղայեցի Վարպետ Մինասը, որի մասին Առաքել Դարբիժեցիի իր պատմութեան 409րդ երեսում գրել է հետեւեալ ընտրոշ տողերը.

— «Այս Վարպետ Մինասս սաացաւ իր արուեստ պատմկերահանութեան եւ ծաղկարարութեան, քանդի ի տիս աղայութեան իւրոյ ի պատճառէ իմեզէ եղել սմին գնալ ի քաղաքի Բզրեայ, որ է Հայապ»:

Գրչազրի գեղեցկութիւնը կազմում են մանրանկարները, որոնք ո՛չ միայն արժէքաւորում են Աւետարանի բովանդակութիւնը, այլ եւ ցայտուն դազափար են տալիս 17րդ դարի նկարչի գեղարուեստական առանձնայատկութիւնների մասին: Այդ մանրանկարներից յատուկ ուշագրութեան

արժանի են սկզբի տարը սովեզո՞ծ խորանները; Այնտեղ հանդէս են գալիս երկու տարբեր նկարիչներ, երկու տարբեր վրձիններ: Սովեզո՞ծ Փօների վրայ վրձինուած են տարբեր եւ նուրբ, զընթել՝ ոճերով զարդանկարներ, որոնք իրենց վառ, կենդանի ու պայծառ դոյներով, այնպիսի հոգեզմայլ խաղաղութիւն են պիտու՞մ ձեր տրամագրութեան վրայ, որ խորանում էջ այդ նկարների էութեան մէջ եւ գալիս այն եզրակացութեան, որ այդ մանրանկարները հմուտ եւ ձեւակերպուած նկարչի ստեղծագործութիւններ են: Այլ ընդթ ունեն կողքերի մանրանկարները, որոնք միջակ (թերեւս նկարչի աշակերտի) գործեր են, եւ ցաւում էջ, որ տեղ են գրաւել: նուրբ ու զընթել՝ մանրանկարների մօտ, որոնցից յատուկ ուշադրութիւն են գրաւում Յրզ, Յրզ էջերի նկարները: Դրանք ուռուցիկ օսկէ երանդի դեղեցիկ արուեստը պատկերող վրձինի լաւագոյն արտագրութիւններ են, որոնց սովեզո՞ծ կերտուածը գրաւում է ձեռ գծերի նրբութեամբ: Առհասարակ, սովեզո՞ծ Փօների վրայ, զգլխաւորապէս կապոյտ-կարմիր երանգներով եւ մէկը միւսից հետաքրքիր ոճերով վրձինուած այդ զարդանկարներին իրենց նուրբ գծագրութեամբ, դեղեցիկ մօտիւններով եւ ինքնատիպ արուեստով մանրանկարչական լաւագոյն ստեղծագործութիւններ են, որ նկարչական ներդաշնակութիւնը ո՛չ միայն հասնէ է կատարելութեան, այլ եւ զարդանկարների դեղեցիկութիւնը բացատրէ է. իսկ դոյները զըրաւել են իրենց թարմութեամբ ու պայծառութեամբ: Այդ մանրանկարներն էլ ձեռ ցայտուն գազափար են տալիս ո՛չ միայն Մրզ դարի առաջին ճառորդում հայ մանրանկարչական արուեստի գծով կատարուած գեղարուեստական նուաճումների, այլ եւ նոյն շրջանում ապրող ու ըստեղծագործող նկարչի նուրբ, ճաշակի եւ նրա վարպետ վրձինի մասին:

Մանրանկարչական տեսակէտից նոյնքան ուշադրան են 12րդ, 84րդ եւ 206րդ էջերում գծուած խորանները, որոնք իրենց ուրոյն եւ ինճատիպ ոճերով ու մօտիւններով նկարչական գեղեցիկ նըմուշներ են: Յատուկ ուշադրութեան արժանի են մանուսանդ 12րդ եւ 206րդ էջերի կարճանկարները, որոնք իրենց ամբողջութեամբ կարելի է համարել, մանրանկարչական արուեստի լաւագոյն գործեր: Այդպէս է նաեւ 130րդ էջի խորանագար-

դը: Դա Մրզ դարի մանրանկարչի գեղարուեստական նուրբ ճաշակը պատկերող զարդանկարչական մի գեղեցիկ նկար է: Իշխող, դոյններն են սակէ Փօնի վրայ կապոյտը եւ մասամբ էլ կարմիրը: Առհասարակ, նկարչի սիրած դոյներն են դուրի երանգը, որ օգտագործել է ամենալայն չափով, կապոյտը եւ մասամբ էլ կարմիրը:

Հմուտ վրձինով են դժոճած: նաեւ Յրզ եւ 4րդ էջերի զարդանկարները, որոնց մէջնադերուած, սովեզո՞ծ Փօների վրայ, կարմիր եւ սովեզո՞ծ երանգով վրձինուած Փանտաստիկ -կենդանիները նկարչական ուրոյն գեղեցիկութիւններ են: Դըրանք ամբողջական գծերով նկարուած նուրբ գործեր են:

Ձեռագրի մանրանկարներից մի երկուսն ունեն ազգագրական արժէք: Այդպէս է Ճրզ էջի վրայ վրձինուած նկարը, որ իր ուրոյն տարազով ձեռ ցայտուն գաղափար է տալիս Մրզ դարի գլխատի մասին:

Այլ տպատրութիւն էջ ստանում նկարչի վրձինն ավետարանիչների նկարներից, որոնք ընդգծում են որ միայն մի հանգամանք նկարիչը չաւ չի ուսումնասիրել. մարդակազմութիւնը: Որքան մանրանկարներ վրձինուած են գեղեցիկութեամբ ու նրբութեամբ, օգքան քանատեղծական են եւ ընդշու՞մ են նկարչի արուեստի վեհութիւնն ու նուրբ ճաշակը, որքան զարդանկարների եւ դոյների ներդաշնակութիւնը հիանալի է, նոյնքան էլ նկարների մարդակազմութիւնը թոյլ է: էլ 11րդ Մատթէոս ավետարանիչն է, որ նայում է խոհուն դէմքով: Այդ մանրանկարի գեղեցիկութիւնը ննմազնու՞մ են ձեռքերի եւ ոտների այնպիսի գծագրութիւնները: Գեղեցիկ է նկարի ճարտարապետական քնապատկերը եւ դոյների ներդաշնակութիւնը: Նկարին առանձին գրաւչութիւն է տալիս նաեւ օսկէ Փօնը:

83րդ թղթի վրայ վրձինուած է Մարկոս ւետարանիչը, որի սեւ արտայայտիչ աչքերը, սեւ գեղեցիկ մազերը եւ կարճ մօրուքը գրաւում են ձեր նշադրութիւնը: Իշխող դոյներն են կապոյտը, կարմիրը եւ սուկ երանգը: Նկարին գրաւչութիւն են տալիս նաեւ ճարտարապետական մօտիւնները:

129րդ էջում բազմել է Ղուկաս Աւետարանիչը: Այս մանրանկարի գեղեցիկութիւնը եւս կազմում են ճարտարապետական ոճերը: Նշենք եւ

այն, որ այս նկարից առաջ 128րդ էջում, տարրերի ձեռագրով արձանագրուած է հետեւեալը՝

— ՎՄՊ դասք քահանայից, որք հանդիպիք սուրբ աւետարանիս, յիշեցէք զուրբ Ստեփանոս եկեղեցու քահանայքն, զի ի ծաղկել աւետարանիս հոգեւորացէս հանգուցին եւ սիրով խնամեցին զտրուպ Մկրտիչ դպիրս. Բանն Աստուածատուր՝ Որդին Միածին հատուցանէ ի ժամ արդար հատուցմանն եւ ընդ սուրբ քահանայցն դասէ ամէնն ։

205րդ էջում Յովհաննէս Աւետարանիչն է եւ Յիսուս : Այդ նկարներն էլ վկայում են, որ իբրեւ դիմանկարիչ Աստուածատուրը թոյլ ստեղծագործող է :

Աւետարանի նկարչական արուեստին առանձին երանգ են տալիս լուսանցքներում իշխող տարրեր ոճերով գծուած զարդանկարները եւ թռչնանկարները, որոնցից շատերը նուրբ վրձինի արտադրութիւններ են :

\*\*\*

Ի՞նչ են ասում ձեռագրի մանրանկարները : Ամենից առաջ այն, որ Աստուածատուրը մէկն է 17րդ դարի դրաֆիկ նկարիչներից, որը ոսկեզօծ Փօնի վրայ ա՛յնքան զեղեցիկ եւ երկրաշափական տարրեր ոճերով վրձինել զմանրանկարներ, որոնց

ետեւում ցուանում է վարպետ եւ կազմակերպուած մանրանկարչի պայծառ դիմագիծը : Եւ արդարեւ, Աստուածատուրի նկարներում ոսկու օգտագործումը հոյակապ է, զոյնրի եւ զարդանկարների ներդաշնակութիւնը՝ սքանչելի, նրկարներ, որոնք վկայում են նրա զեղարուեստական նուրբ ճաշակի մասին : Սակայն, չնայած այդ իրական տուեալներին, մարդակազմութեան արուեստը նա լաւ չի ուսումնասիրել : Իրանով էլ պիտի բացատրել, որ նրա գծած աւետարանիչների նկարներն աւելի վերացական բնոյթ ունեն քան թէ իրական :

Եզրակացնելով մեր բնորոշումները ձեռագիր աւետարանի մանրանկարների մասին, նշենք որ Հայէպում հայ մանրանկարչութիւնը 17րդ դարի սկզբում արել է զգալի նուաճումներ : Այդ հանդամանքն էլ հաստատում է, որ նոյն շրջանում Հայլէպը հանդիսացել է հայ նկարչական արուեստի զարգացման կենդրոն, ուր տաղանդաւոր նկարիչներ փայլել են իրենց վրձինի արժէքաւոր ըստեղծագործութիւններով : Այդ մանրանկարիչների շարքում պատուաւոր տեղ է զբաւում Աստուածատուր դպիրը :

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Թէիքան, Մայիս 1947